ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 107

«18» 11 2022 թ.Ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շիրակի մարզի դատախազ Գուրգեն Գառնուշի Գրիգորյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և Արարատի մարզի դատախազ Արմեն Դմիտրիի Չիչոյանին Շիրակի մարզի դատախազի պաշտոնին փոխադրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար 17.11.2022թ. N 436-Ա և 18.11.2022թ. N 439-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Շիրակի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Գ.Գրիգորյանի կողմից՝ Շիրակի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Չիչոյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Մանասյան Անահիտ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Եդիգարյան Արամ - Շիրակի մարզի դատախազի տեղակալ,

Մարտիրոսյան Հայկ - ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,

Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Շաբոյան Լուսինե -	Շիրակի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 5-ը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի նոյեմբերի 22-ին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ